

ՍՈՒՐԻՈՑ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷՆԵՐՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ

Անի Ֆիշենկճեան

Ներածական

Սուրիան¹ իր աշխարհագրական դիրքի պատճառով հնագոյն ժամանակներէն եղած է Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ՝ Իրաք, Պարսկաստան ու Հնդկաստան տանող ճանապարհին, ինչպէս նաեւ մեկ կողմէ Պոլսոյ ու Անատոլի, Կիլիկիոյ ու Հայաստանի, միւս կողմէն Արաբիոյ, Պաղեստինի, Եգիպտոսի ամենակարեւոր ռազմավարական, քաղաքական ու վաճառականական կեդրոններէն մեկը:

Առաջին համաշխարհային պատերազմէն ետք աշխարհաքաղաքական մեծ փոփոխութիւնները, որոնք ակնատես եղաւ Մերձաւոր Արեւելքը, յանգեցուց որոշ երկիրներու նոր սահմանադրման, որոնցմով իր յայտ եկան նոր ազգային պետութիւններ, ինչպէս՝ Սուրիան:

Յետեղեռնեան, յատկապէս հայկական սփիւռքի ձեւաւորման տարիներուն գաղթականներով համալրուած Սուրիոյ հայ համայնքը կը հաշուէր 110-120 հազար մարդ տեղաբաշխուած հետեւեալ շրջաններու մէջ. Հալէպ՝ 50,000 (55,000), Պէյրութ եւ շրջաններ՝ 25.000, Դամասկոս եւ շրջա-

կայք՝ 15.000, Զահլէ՝ 1200, Հոմս՝ 700, Համա՝ 400, Թրիփոլի՝ 1000, Ճարապլուս՝ 1000, իսկ մնացեալը՝ Ալեքսանտրէթի, Անտիոքի եւ շրջակայքի ու այլ վայրերու մէջ²:

1925թ.-ին Սուրիոյ հայ համայնքը, բացի առաքելականներէն, իր մէջ կը համախմբէր 15,000 հայ կաթողիկէ եւ 10,000 հայ բողոքականներ³:

Հալէպ ըլլալով հայ գաղթականներու ամենահոծ կեդրոնն ու ապաստարանը, ստուար զանգուած մը կը գտնուէր այնտեղ⁴ (տե՛ս աղիւսակը).

բնակչութիւն		տեղացի	գաղթական
հայ առաքելական	35.000	4-5.000	շուրջ 30.000
հայ կաթողիկէ	10.000	5.000	5.000
հայ բողոքական	5.000	500	4.500

Սուրիոյ հայ կաթողիկէներու կրթական գործունէութեան եւ հիմնախնդիրներուն վերաբերեալ մեր յօդուածը առաջին փորձն է, որ կը մատուցուի: Թեմայի վերա-

1 Պատմաաշխարհագրական կամ պատմական Սուրիան (Պիլատ ալ-Օամ), բացի այսօրուան Սուրիայէն, նկատի ունիք ժամանակակից Պաղեստինի որոշ հատուածներ, ներկայիս Իսրայէլի տարածքը եւ Յորդանանի մեկ մասը, ինչպէս նաեւ Լիբանանի լեռնային մասը, որ անցի շատ յայտնի է Լեռնալիբանան անունով, տե՛ս Ն. Յովհաննիսեան, *Արաքական երկրների պատմություն*, հտ. 2, Զանգակ 97, Երևան, 2004, էջ 77: Այս մասին տե՛ս նաեւ Յ. Թովուզեան, *Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթաբնակների պատմություն (1841-1946)*, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ.,

Երևան, 1986, էջ 7, Գ. Գապպէնճեան, «Սուրիա», *Քաղաքական, կրօնա-պատմական, կրթական եւ տնտեսական տեսակետով*, Ա.-Քաղաքական», «Տաթէ» կրօնական տարեցոյց, Բ. տարի, 1926, Հալէպ-Սուրիա, Տպագրութիւն «Արաքս»-Բ. Յ. Թովուզեան (էջ 274-312), էջ 287:

2 Պապիկեան Մ.Ա., *Սուրիա եւ հայութիւնը (Ա. Ընդհանուր տեսություն եւ ընկերային կացութիւնը)*, «Արեւ» օրաթերթ, ԺԱ. տարի, թիւ 1975, 22 Օգոստոս 1925, Գափիրէ:

3 Անդ:

4 Անդ:

բերեալ ամբողջական մենագրութիւն մը առկայ է, սակայն կան յօդուածներ ու հրապարակումներ սփիւռքի այդ ժամանակաշրջանի հայկական մամուլի մէջ: Ուստի, թեման այժմէական է, որովհետեւ մինչ օրս կաթողիկէ համայնքը ներկայութիւն է Սուրիոյ մէջ, իր կրթական, մշակութային եւ եկեղեցական կառոյցներով: Հետեւաբար ուսումնասիրութեան թեման կ'առնչուի ֆրանսական մանդատի տարիներուն կաթողիկէներու համայնքային կեանքին, եւ կրթական բնագաւառէն ներս անոնց հայապահպան գործունէութեան մասին:

**ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ
ՀԱՄԱՅՆՔՆ ՈՒ ՈՒՍՈՒՄՆԱԿՐ-
ԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
(1920-1940-ական թթ.)**

Պատմական աղբիւրներու համաձայն, 1899 թ.-ին Բերիա (Հալէպ) կը հասնին խումբ մը հայ Կաթողիկէ Անարատ Յղութեան հայ քոյրեր (մայրապետներ) եւ թեմի Առաջնորդ Աւետիս արք. Թիւրիքեանի խնդրանքով Բերիոյ մէջ կը հիմնեն Հայ Աղջիկներու առաջին որբանոցը⁵: 1915 թ.-ի հայոց մեծ եղեռնի հետեւանքով Հայ կաթողիկէ թեմերու (Մարաշ, Մարտին, Այնթապ, Մուշ, Տիարպէքիր, Մալաթիա, Էրզրում, եւ այլն) կործանումով բազմահազար հայեր, իրենց վարդապետներով եւ մայրապետներով, որպէս տարագիրներ, Հալէպ կը հասնէին: Անոնք սկզբնական շրջանին ապաստան կը գտնէին վրաններու տակ, տախտակեայ պարագաներու եւ կամ թիթեղեայ տնակներու մէջ: Եկեղեցւոյ իշխանութեան առաջին գործը կ'ըլլայ գաղթականները ա-

պահովել աղօթավայրով եւ դպրոցով, պայմանաւ որ մօտ ըլլային իրենց բնակավայրերուն: Այս աշխատանքը ընթացք կ'առնէ, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն Յիսուսեան միաբանութեան հայրերը, որոնց մէջ կային նաեւ հայ վարդապետներ, ինչպէս՝ հայր Յովհաննէս վրդ. Մըսրեան եւ հայր Յարութիւն Փասգալ վրդ. Ծովիկեան: Անոնք յանձն կ'առնեն օգնել հայ գաղթականներուն եւ 1925 թ.-ին Հալէպի Սուլէյմանիէ թաղամասին մէջ մատուց մը կը կառուցեն, որ յետագային կը կոչուի Ս. Փրկիչ (Վառվառա)⁶:

Մինչեւ 1922 թ. այն հայերը, որոնք կառչած մնացած էին իրենց հայրենի հողին, անոնք եւս պարտադրուած կը գաղթեն: 1923 թ.-ի Յունուարի սկիզբը 14,766 նոր տարագիրներ կը հասնին Հալէպ: Նոյն ամսուն՝ 27,380 հոգի կ'ապաստանի Սուրիա «Վեց ամսուայ ընթացքին ֆրանսական իշխանութիւնները ասոնց 2,875,920 հացաբաժին բաշխեցին»⁷: Նոր կարաւանին մէկ երրորդը՝ յոյներ, երկու երրորդը՝ հայեր էին:

1923 թ.-ին Անատոլուէն ներգաղթող Յիսուսեան (Ճիզուլիթ) հայրերու միջոցով կը կազմուի հայկական քեմբերու ֆրանսական միսիոն մը, որ սկիզբէն կը հովանաւորուի ֆրանսական Բարձր Յանձնակատարի (գոմիսարիաթի) կողմէ: Յիսուսեանները Հալէպի մէջ կ'ունենան երեք դպրոց 500 աշակերտներով եւ գիշերային դասընթացք մը երիտասարդ գործաւորներու համար: Իսկ Դամասկոսի մէջ եւս կ'ունենան դպրոց մը. 1925 թ.-ի Դամասկոսի մէջ սկիզբ առած ապստամբական շարժումներու հետեւանքով Յիսուսեան հայրերը կը տեղափո-

5 Միրիաթեան Տէր Պետրոս Արք., Համառօտ պատմութիւն Հալէպի կաթողիկէ հայոց, «Գեղարդ» Սուրիահայ տարեգիրք, Ե. գիրք, Հալէպ, էջ 411:

6 1936 թ.-ին Յիսուսեան հայրերը Հալէպի Մէլտան-Փոսթան Փաշա թաղամասերուն մէջ կը կառուցեն «Վարդապետ» վարժարանը՝ փակելով իրենց ինգաւտիոս-ինիսա վարժարանը, զոր Գա-

խապէս կառուցած էին Բերիոյ (Հալէպի) «Դուրապալ Ղուրապա» (Օտարներու հող) թաղամասին մէջ: Տե՛ս, Միրիաթեան Տէր Պետրոս Արք., Համառօտ պատմութիւն Հալէպի կաթողիկէ հայոց, էջ 411:

7 Գաղթական ժողովուրդներու խնամատարութիւն, «Եփրատ» երկօրեայ, Գ. տարի, թիւ 220, 4 Սեպտեմբեր 1929, էջ 2:

խուհին Պէյրուսի եւ դպրոցը կը կորսնցնէ իր անցեալի փառքը⁸:

Իսկ Յրանչիսկեան հայրերը, որոնք բազմաթիւ կառոյցներ հիմնած էին հայկական գաղթավայրերուն մէջ, թրքական հողամասին վրայ, յատկապէս Մարաշ եւ շրջակայքը, ֆրանսացիներու հեռանալէն ետք հայ ժողովուրդէն մաս մը իրենց հետ կը տեղափոխեն Հալէպ: Անոնք արդէն իսկ դպրոց մը հիմնած էին Հալէպի Ալ-Ռամ թաղամասին մէջ, որ կոչուած էր Հայր Պալեանի վարժարան՝ հիմնուած 1920 թ.-ին, չքաւոր հայ տղոց դաստիարակութեան համար: Յրանչիսկեան հայրերը Հայ կաթողիկէ համայնքէն անկախ ժողովրդապետութիւն մըն ալ կը հաստատեն Հալէպի մէջ Լատին համայնքի հովանաւորութեամբ⁹:

Լատինադաւանները, որոնք նոյնպէս ներկայութիւն էին Սուրիոյ մէջ, 1920 թուականէն ետք, ֆրանսական Մանդատի օրերուն, Սուրիոյ մէջ յատուկ կարգավիճակ ունէին ի տարբերութիւն միւս փոքրամասնութիւններուն: Անոնք հոգատար իշխանութեանց (ֆրանսական) կողմէ կը հովանաւորուէին. իշխանութիւնը առանձնապատուկ վերաբերմունք կը ցուցաբերէր: Պետական, շրջանային եւ գիւղական իշխանութիւններուն մէջ Լատին ներկայացուցիչները ամենամեծ տոկոսը կը կազմէին եւ իշխանութեան կառոյցներու դռները փակ չէին անոնց առջեւ: Չոլաքեան կը գրէ. «Հայազգի լատինները իրենք զիրենք կը սահմանազատէին այլածէս ազգակիցներէն ու վերէն կը նայէին անոնց վրայ ալ աւելի բորբոքելով միջարանական անհանդուրժողութիւնը»¹⁰:

Արդ, ընդհանուր պատերազմի հետեւանքով տասնեակ հազարաւոր կիլիկեցի

գաղթականներու հիւրընկալուիլը տնտեսապէս քայքայուած Սուրիոյ մէջ, կրնար անախորժութիւններու ծնունդ տալ: Սակայն «Եփրատ» թերթը կը գրէ, որ «... Տեղացիները որեւէ խռովութիւն չտուին: Հովանաւորեալ պետութիւնները, նոյնիսկ լայնօրէն նպաստեցին տարագիրներու թշուառութեան ամոքումին»¹¹: Եւ այնպէս 1924-1925 թթ. Յրանսան շարունակեց զբաղիլ Փոքր Ասիոյ գաղթականներու վիճակով՝ անոնց տրամադրելով անվճար դարմանումի միջոցներ, դեղեր եւ ջանալով բարելաւել անոնց գոյութեան նիւթական պայմանները: Նոր տարրը գործունէութեան մղելով հանդերձ, Յրանսան կը ձգտէր եւ ճիգ չէր խնայեր պահելու համար Սուրիոյ եւ Լիբանանի զօրաւոր կերպով սարսած տնտեսական հաւասարակշռութիւնը:

* * *

Հալէպի «Տաթեւ տարեցոյց»-ի 1926 թ.-ին համարէն կը տեղեկանանք, որ Հալէպի Հայ կաթողիկէները ունեցած են իրենց յատուկ եկեղեցին թիւէլի (շրջան, որ այսօր փողոցի անուն է) մէջ: Առաջնորդը եղած է Տ. Օգոստինոս արք. Սայեղեան եւ փոխանորդ՝ Տ. Պողոս վրդ. Ասիուն: Հալէպի Առաջնորդութեան ենթակայ եղած են՝ Իսկենտերուն, Պէյլան, Գրըզ Խան, Ճարապուտ, Ազազ, Ռազգա, Պապ, Մեմպիճ եւ Տէր Զօր թեմերը¹²:

Հայր Սայեղեան 1907 թ.-ին Հալէպի մէջ կը հիմնէ Հայկական վարժարան մը Աթուանիստ եկեղեցւոյ կից, զայն կ'անուանէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ճեմարան (յետագային Իման (հաւատք) անունով): Այս վարժարանին ղեկը կը ստանձնեն «Յրեր Մարիսթ» կրօնաւոր եղբայրները մինչեւ

8 «Եփրատ» երկօրեայ, Գ. տարի, թիւ 220, 4 Սեպտեմբեր 1929, էջ 2:

9 Միրիաթեան Տէր Պետրոս Արք., նշ. աշխ., էջ 412:

10 Չոլաքեան Յակոբ, Սուրիոյ քրիստոնէայ այլադասան հայերը եւ անոնց ազգային ինքնութեան

խնդիրը, «Էջմիածին» ամսագիր, 2017, Բ., էջ միածին, էջ 129:

11 «Եփրատ» երկօրեայ, Գ. տարի, թիւ 220, 4 Սեպտեմբեր 1929, էջ 2:

12 «Տաթեւ» Տարեցոյց, Բ. տարի, 1926, Հալէպ, էջ 306:

1930 թ., որմէ ետք՝ Միխիթարեան հայրերը մինչեւ 1965 թ.¹³:

1926թ.-ին կը վախճանի Բերիոյ թեմի հայ կաթողիկէ առաջնորդ՝ հայր Օգոստինոս արք. Սայեղեան: Սայեղեանի վախճանումով երկու տարի թեմի Աթոռը թափուր կը մնայ: 1928 թ.-ին Հալէպի կաթողիկէ թեմի Առաջնորդ կը նշանակուի հայր Գէորգ արք. Գորդիքեան /1928-1933 թթ./: Հայր Գէորգ արք. Գորտիկեանի օրով Ճարապուհի մէջ Հայ կաթողիկէ¹⁴ հաւատացեալներուն համար կը կառուցուի եկեղեցի եւ քահանայատուն: Տարիներ ետք դպրոց մըն ալ կը կառուցուի եւ կը յանձնուի Հայ Քոյրերուն /մայրապետներուն/ ծառայելու հայ ազգին մատղաշ զաւակներուն¹⁵:

ԴԱՄԱՍԿՈՍ

Դամասկոսի հայ կաթողիկէ համայնքը վերակազմուած էր զինադադարէն ետք: 1915-1922 թթ., Մարաշէն եւ Մերտինէն, Դամասկոս հասած գաղթականներու թիւի շնորհիւ համայնքը կը ստուարանայ: 1922 թ.-ին հայր Գէորգ արք. Գորդիքեանի կողմէ կը վերաբացուին «... նախկին շէնքին մէջ, տղոց եւ աղջիկներուն առանձին բաժիններով»¹⁶ դպրոցներ:

1925 թ.-ի տուեալներով Դամասկոսի հայ կաթողիկէ եկեղեցւոյ հաւատացեալներու թիւը կը գնահատուէր 1.000 անձով:

ունէին եկեղեցի¹⁷ Պապ Թումայի մէջ¹⁸: Դամասկոսի մէջ գործած են Ֆրանսական Լազարիստ Միաբանութեան վարժարաններու հայկական բաժինը, «Ֆրանսահայ» ձէզուիթաց (Յիսուսեաններու) վարժարանը, Հայ կաթողիկէ Աղջկանց վարժարանը: Իսկ երկրորդական Գոլէժ Տէ Ֆրէր, Գոլէժ Տէ Լազարիսթ եւ այլն¹⁹: Դամասկոսի հայ կաթողիկէ ժողովրդապետութիւնը, որ մինչ այդ ենթակայ էր Զմմառի Պատրիարքական աթոռին (Լիբանան), 1922-1946 թթ. կը կապուի Հալէպի Արքեպիսկոպոսութեան²⁰: 1930 թ.-ին կը վերսկսի գործել 1865 թ.-ին կառուցուած Ս. Գրիգոր Լուսաւորիչ վարժարանը իր մանկապարտէզ եւ նախակրթարան բաժիններով²¹: Կը վերկառուցուի նախկին Առաջնորդարանի շէնքը, Գթութեան քոյրերու տրամադրուած դպրոցական շէնքը²²:

Մինչեւ Տրուզ լեւան 1925-1927 թթ. ապստամբութիւնը, Դամասկոսի մէջ գործած են ութ հայկական դպրոցներ, որոնցմէ մեկը հայ կաթողիկէ համայնքին կը պատկանէր, երկուքը լատին միաբանութիւններու²³: Հայ կաթողիկէ Օրիորդաց դպրոցը ունեցած է 120 աշակերտ, Յիսուսեաններու /ձգուիթներու/ Ֆրանքո-արմենիւն դպրոց՝ 162, Լազարիստներու դպրոցի հայկական բաժինին՝ մէջ՝ 100 աշակերտ: 1927 թ.-էն

13 Միրիաթեան Տէր Պետրոս Արք., Գ2. աշխ., էջ 411:

14 Գաղթած էին Պերեճիքէն:

15 Միրիաթեան Տէր Պետրոս Արք., Գ2. աշխ., էջ 412:

16 Չոլաքեան Յակոբ, Սուրիահայ դպրոցի պատմութիւն, Բ. հտ., Երեւան, 2021, 340:

17 Դամասկոսի հայ Կաթողիկէ Ամարատ Յղութեան եկեղեցին հիմնուած է 1863թ.-ին Պապ Թումայի մէջ Վրթամէս վրդ. Եուզուքեանի օրով. շրջափակէն մերս 1865թ.-ին հիմնուած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ ծխական առաջին դպրոցը: Վարժարանի գործունէութիւնը դադրած է մինչեւ 1930: Դպրոցը կը վերաբացուի մանկապարտէզ եւ մանկապարտէզի բաժնիներով: Գործած է մինչեւ 1945-1946 տարիներուն: (Տե՛ս, Ազէզեան Հուրի, Դամասկոսի հայ գաղութի մասին, «Հասկ

հայագիտական» տարեգիրք, Գոր շրջան, Ժ. տարի, 2002-2006, էջ 349):

18 Վիճակագրական ծանօթութիւններ, Դամասկոսի անցեալի եւ ներկայի մասին, «Սուրիահայ Տարեցոյց», Հալէպ, 1925, էջ 255:

19 Ազէզեան Հուրի, Դամասկոսի հայ գաղութի մասին, էջ 349:

20 . 92, ص 2016, دمشق، دمشق، د. بورنزيان سرکيس، آرمن دمشق، دمشق، ص 92. (Տե՛ս նաեւ Չոլաքեան Յակոբ, Սուրիահայ դպրոցի պատմութիւն, Բ. հտ., Երեւան, 2021, էջ 327):

21 . 92, ص 2016, دمشق، دمشق، د. بورنزيان سرکيس، آرمن دمشق، دمشق، ص 92.

22 Չոլաքեան Յակոբ, Սուրիահայ դպրոցի պատմութիւն, Բ. հտ., էջ 327:

23 Թովմուզեան Յ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, էջ 277-278:

ետք փակուած են Դամասկոսի Լատին միսիոնարներու դպրոցները:

Բացի Հալէպէն ու Դամասկոսէն բազմաթիւ հայկական վարժարաններ գործած են Սուրիոյ միւս քաղաքներուն եւ գիւղերուն մէջ²⁴:

Գրըգիսանի²⁵ (Հալէպէն շուրջ 65 քիլոմետր արեւմուտք) մէջ եւս հայերը բնակութիւն հաստատած են եղեռնէն առաջ: Անոնք ընդհանրապէս դադարած էին Կիլիկիայէն: 1933 թուականի «Աւետիք»-ի համարներէն կ'իմանանք, որ Գրըգիսանի Յիսուսեան հայրերը իրենց սեփականութիւնը դարձուցած են Լազարիսթներու վանքը, երկու քոյր Միաբանութիւններու եկեղեցիները իրենց դպրոցներով: Հայ կաթողիկէները կը յաճախէին Լազարիսթներու եկեղեցին, ուր կը պաշտօնավարէր եւ օգնութիւն կը ցուցաբերէր գեր. Տ.Ն.Վ. Պաղտիկեանը²⁶: 1930թ.-ին Լազարիսթներուն կ'առաջարկուի առանձին տոմարներ ունենան լատինացած եւ հայ կաթողիկէները ու անոնց պաշտամունքի ժամեր ճշդել եւ հայերէն երգեցողութիւն աւանդել: Սակայն այս որոշումը անախորժութիւն կը ստեղծէ: Հայ կաթողիկէները անհրաժեշտ կը համարին իրենց ուրոյն եկեղեցին ունենալ «... ծէսն ու լեզուն պահելու համար»²⁷: Ուստի Բերիոյ թեմի արհի. Գորգիքեան արք. ջանքերով իրականութիւն կը դառնայ եկեղեցւոյ հիմնարկէքը²⁸:

1920-1930 թթ. կը գործէ Հայ կաթողիկէ ժողովրդապետական վարժարանը: Յե-

տագային վարժարանը կը յանձնուի Յիսուսեան վարդապետներու. կը գործէ 1930-1939թթ.: Վարժարանէն ներս հայերէն եւ գրաբար կը սորվի պատասխանատուներէն՝ հայր Մորիս Թալոնը²⁹:

1925թ.-ին նորակազմ Գամիշլիի աւանը կը գաղթեն մեծ թիւով հայեր Նիսիպիւնէն (Մծբինէն), որոնց մէջ եղած են 30 հայ կաթողիկէ ընտանիք³⁰:

1935թ.-ին կը կառուցեն իրենց հողեայ եւ փայտեայ եկեղեցին, զոր կ'անուանեն Ս. Յովսէփի անունով: 1936թ.-ին Հայր Ժողէֆ Լեւոնեան կը կառուցէ հողեղէն մանկապարտէզ եւ նախակրթարան՝ Ս. Յովսէփ անունով. 1937թ.-ին կը վերանորոգէ եկեղեցին քարէ եւ սիմենթով³¹:

1938թ.-ին կը հիմնուի Հայ կաթողիկէ Առաջնորդանիստը Գամիշլիի մէջ Հայր Կիւրեղ եպս. Զոհրապեանի ժամանակաշրջանին: Նոյն թուին, 1938-ին, Հասիչէի մէջ կը հիմնուի հայ կաթողիկէ Պատրիարքական Փոխանորդութիւն իր մէջ ընդգրկելով Հասիչէի եւ Տէր Զօրի նահանգները: 1940-1952թթ. Պատրիարքական Փոխանորդութիւնը կը վարէ հայր Կիւրեղ եպս. Զոհրապեան³²:

1943թ.-ին Գամիշլիի վարժարանի աշակերտութեան թիւը եղած է 180. «Այս տարի վերջնականապէս յաջողեցանք մեր արաբախօս փոքրիկներուն լեզուն փոխելու հայերէնի, շնորհիւ խիստ հսկողութեան եւ զբօսանքներու ընթացքին կիրարկուած

24 Նոյն տեղում, էջ 276:

25 Գրըգիսան հայաբնակ գիւղ է, որ կը գտնուէր Հալէպ նահանգի Հալէպ գաւառի Ալեքսանտրէթ գաւառակին մէջ. Ալեքսանտրէթ քաղաքէն դէպի հարաւ-արեւելք:

26 «Աւետիք», Բ. տարի, 1, թիւ 13, Մարտ 1933, Հալէպ, էջ 15:

27 Նոյն տեղում:

28 Նոյն տեղում:

29 Չոլաքեան Յակոբ, Սուրիահայ դպրոցի պատմութիւն, էջ 36:

30 «Հայաստանի կոչնակ», 29 Հոկտեմբեր 1932, թիւ 44, էջ 1108: «Արեւելք» օրաթերթ, 29 Հոկտեմբեր 1948, էջ 2:

31 Կաթողիկէ Ս. Յովսէփ եկեղեցւոյ քարերը բերուած են Թուրքիոյ Մծբինի Ս. Յակոբ վանքի քարերէն: Դժբախտաբար քարեր բերողները զայն ներկելով կապոյտ՝ կը կորսցնեն քարի պատմական ու հնագիտական արժէքը:
ملكي أسمر جوزيف، من نصيبين إلى زالين (القامشلي)،
St'u، دمشق، ١٩٩٥، ٢٢٩/

32 Չոլաքեան Յակոբ, Սուրիահայ դպրոցի պատմութիւն, Բ. հտ., էջ 272:

նշանակին եւ անոր հետեւանք բարի նիշի եւ գրապատիժի դրութեան»³³:

Ապուքամալի (Մէյատին) գիւղին մէջ, ուր բնակութիւն հաստատած էին 65 հայ կաթողիկէ ընտանիք, մեծամասնութեամբ արաբախօս³⁴, 1931թ.-ին այնտեղ կը կառուցուի մատուռ մը³⁵: 1932թ.-ին կ'աւարտին եւ կ'օրհնուին Ճարապուռի եւ Ապուքամալի մատուռները³⁶:

1915թ.-էն առաջ Տէր Զօրի մէջ եւս ապրած է շուրջ 20 հայ կաթողիկէ ընտանիք: 1915թ.-էն ետք Տէր Զօրի հայերու թիւը եղած է 150 հազար, որոնց մէջ գործած են հայ կաթողիկէ քահանաներ՝ Տէր Վարդան Պաղէճեան, Տէր Յովհաննէս Ագրապեան, Հայր Յովհաննէս Աղաճանեան /Յիսուսեան միաբան/: 1919 թուականին Անգլիացիներու Տէր Զօր մուտքը խրախուսած է տեղի հայերը, որովհետեւ անգլիացի գաբզէն Գորվէր եւ իր զինուորները տէր կանգնած էին վերապրող հայերուն: Սակայն անգլիացիներու շրջանը լքելէ ետք, կողոպուտի կ'ենթարկուի արաբներու կողմէ: Գոմանտոն Թրանկան գարնան կը հասնի Տէր Զօր եւ քաղաքը կը գտնէ բնականոն վիճակի մէջ: 1923 թուականին Տէր Յովսէփ Վ. Ճէննանճի ժողովրդապետը կը ղրկուի այնտեղ եւ եկեղեցին քանդուած տեսնելով, մնացորդաց տուններէն մեկը Մատուռի կը վերածէ եւ շուրջ 50 ընտանիք: Շնորհիւ Տէր Զօրի եւ Ճէզիրէի հայ կաթողիկէներուն, մեծ մասամբ, կատարուած հանգանակութեամբ կը վերանորոգուի եկեղեցին եւ

1928թ.-ի Սեպտեմբեր 30-ին կը բացուի եկեղեցւոյ դռները³⁷:

Տէր Զօրի մէջ գործած են երկու եղբայրութիւններ՝ Սուրբ Սրտին Յիսուսի այրերու եւ առհասարակ մանչերու համար, միւսը Անարատ Յղութեան՝ կիներու եւ աղջիկներու համար: Համայնքապետի վկայութեամբ շրջանը ունեցած է Ասորի կաթողիկէներու մանչերու դպրոց: Ուստի կը ստիպուի աղջիկներու համար վարժարան մը յատկացնել: 1930 թուականին, երբ «Ֆրանսացի lons le Soumer մայրապետները ...»³⁸ կու գան, կը ստիպուի վարժարանը յանձնել անոնց եւ վարձու տալ դասարանները. «....քանի որ չէին կրնար ոչ հետերնին մրցիլ, ո'չ ալ միջոց գտնել շարունակելու»³⁹: Անարատ Յղութեան մայրապետները անտարբեր մնալով համայնքապետի կողին ու յորդորներուն առաւել հոգատար չեն գտնուիր Մայրենի լեզուի /հայերէնի/ ուսուցման խնդիրին. այդ պատճառ կը հանդիսանայ, որ «Հայ աղջիկները այսօր մայրենի լեզունին մոռնալու վտանգի մէջ են»⁴⁰, կը գրէ յօդուածագիրը: Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը եւս իր նիւթական օժանդակութիւնը կը ցուցաբերէ Տէր Զօրի կաթողիկէ համայնքին պատկանող դպրոցին, սակայն գոհացուցիչ արդիւնք չ'արձանագրեր:

1932թ.-ի տուեալներով Անարատ Յղութեան Մայրապետները Հալէպի մէջ ունեցած են չորս կեդրոններ⁴¹.

33 «Աւետիք» պաշտօնաթերթ, 1943, թիւ 5-8, Պէյրութ, էջ 47:

34 «Աւետիք» պաշտօնաթերթ, Ա. տարի, թիւ 10, Դեկտեմբեր 1932, էջ 71:

35 Նոյն տեղում:

36 «Աւետիք», պաշտօնաթերթ, Ա. տարի, թիւ 2, Ապրիլ 1932, Պէյրութ, էջ 9:

37 «Աւետիք» պաշտօնաթերթ, Ա. տարի, թիւ 10, Դեկտեմբեր 1932, էջ 70:

38 Անդ:

39 «Աւետիք» պաշտօնաթերթ, Ա. տարի, թիւ 10, Դեկտեմբեր 1932, Պէյրութ, էջ 70:

40 Անդ:

41 «Աւետիք» պաշտօնաթերթ, Ա. տարի, թիւ 5, Յուլիս 1932, Պէյրութ, էջ 29:

Հալէպ	Քոյր	ուսուց. քոյր	աշխարհիկ ուսուցչուհի	դասարան	աշակերտուհի
Մեծ վարժարան	15	15	-	10	325
Ս. Աննա որբանոց Ձրի վարժարան}	7	7	-	6	45
					300
Հիդաւանի վարժարան	-	-	-	4	270
Քեսապ					
Ձրի վարժարան	4	4	-	5	120

Այսպիսով կարելի է հաստատել, որ չուրջ 940 աշակերտուհիներ կը յաճախէին Հալէպի վարժարանները: Սուրբիոյ հայաշատ Հալէպ քաղաքին մէջ Անարատ Յղութեան Քոյրերու կրթական գործը առաջին տեղը կը գրաւէր: Մեծ վարժարանի շէնքը անբաւարար ըլլալով 1932 կ'ընդարձակուի կողքի չորս քանդուած տունները եւս միացնելով կառուցին: Հիւղաւանի համար (Միտան, Մէյտան, Նոր գիւղ) նոյնպէս մտադրութիւն կար հող գնելու եւ գաղթականներու համար ուրոյն վարժարան մը կառուցելու: Ս. Աննայի վարժարանն ալ իր յարակից որբանոցներով կը ներկայացնէր մեկ ամբողջութիւն: Ան ունէր մանկապարտէզի բաժին մըն ալ եւ յառաջիկայ տարուան ընթացքին պիտի յաջողէին «Փրանսական վկայականի ներկայացնել կարեւոր թիւ մը շրջանաւարտներու»⁴²:

Քեսապի մէջ, ուր բնակչութիւնը հայախօս էր, Փրանսիական Հայրերու վարժարանը յանձնուած է Ա. Յ. Քոյրերու, որոնք տոհմային լեզուի մասնաւոր խնամք կը տանէին: Ծայր աստիճան աղքատիկ այդ

գիւղը խնամուած ուսումնարանի կարիք ունէր. շնորհիւ Ա. Յ. Քոյրերու միջոցառումներ կը կազմակերպուին աղքատ աշակերտներուն անհրաժեշտ կարիքները հոգալու համար⁴³:

Կաթողիկէ փոքր համայնք մըն ալ ձեւաւորուած էր Արաբ Փունար (ներկայիս Քուպանի): Ան կապուած եղած է Գամիշլիի հայ կաթողիկէ Առաջնորդարանին: 1941 թ.-ին ունեցած է «Հայ Կաթողիկէ» վարժարան, որ իր գոյութիւնը պահած է մինչեւ 1946 թ.⁴⁴:

Ճեզիրէի թեմի Ժողովրդապետութիւններ ձեւաւորուած են նաեւ Ռաս Ուլ Այնի եւ Տերպեսիէի մէջ:

Տերպեսիի հայ համայնքը կը կազմակերպուի 1937 թ.-ին⁴⁵: Դէպի այս տարածք գաղթող բազմաթիւ խմբաւորներու մէջ էին կաթողիկէները, որոնք եկած էին համալրելու Տերպեսիէի մէջ համախմբուած այլ «ցեղախումբերու» շարքերը: 1939 թ.-ին կը կառուցուի Տերպեսիէի Սրբուհի Թերեզ եկեղեցի, որուն կից գտնուող երկու սենեակները դպրոցն էր Սրբուհի Թերեզա անունով⁴⁶:

42 Անդ, էջ 30:

43 Անդ, էջ 29:

44 Չոլաքեան Յակոբ, նշ. աշխ., էջ 220:

45 Սակայն կը յիշատակուի, որ 1936 թ. -ին Տերպեսիէի մէջ արդէն կազմուած էր Հայ Մարմնակրթական ընդհանուր միութեան մասնաճիւղ մը, ինչպէս նաեւ 1930-ական թուականներու աւարտին ձեւաւորուած Սուրիահայ Օգնութեան խաչի մասնաճիւղ: Կ'ենթադրուի որ մինչ այդ թուականը հայերը պարբերաբար բնակութիւն հաստա-

տած էին: (Տե՛ս, Թորիկեան Բիւզանդ, Պատմութիւն Հայ Մամնակրթական ընդհանուր միութեան, հտ. Ա., Պէյրութ 1995, էջ 230 եւ Ֆիշենկեան Անի, Յուշամատենան Սուրիահայ Օգնութեան խաչի 1919-2009, Հալէպ, 2010, էջ 116:)

46 Սրբուհի Թերեզա դպրոցը կը գործէ մինչեւ 1945 թ.: Չոլաքեան կը յիշատակէ 1945-1959 թթ. Սրբուհի Թերեզա վարժարաններ: Գիւղը օժտուած եղած է լատին քոյրերու աղջկանց եւ լատին տոմիցիկեան հայրերու տղոց վարժարան, որոնք կը փակուին 1945 թ. -ին: Հայ մայրապետները կը գնեն աղջկանց

Մեկ տարի անց կը հիմնուի Տերպեսիէ հայ կաթողիկէ ժողովրդապետութիւնը:

Տերպեսիէէն արեւելք գտնուող Ամուտա գիւղը եւս 1930 թուականի տուեալներով ունեցած է 20 հայ կաթողիկէ ընտանիք: Գաղթող հայերու մեծ մասը եկած է Մերտինէն (կաթողիկէ արաբախօս) եւ պշեւրիկէն՝ քրտախօս:

Հայ կաթողիկէ համայնքը 1940-ական թուականներուն ունեցած է իր եկեղեցին, սակայն փոքրաթիւ ըլլալուն համար՝ սեփական դպրոց չէ ունեցած: Համայնքի զաւակներէն ոմանք յաճախած են Տերպեսիէի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հովանաւորած վարժարանը եւ կամ միացած են Ամուտայի մէջ գործող ասորի կաթողիկէ համայնքի կրթարանին⁴⁷:

Ռազգայի մէջ եւս ձեւաւորուած է հայ կաթողիկէ համայնք մը, սակայն մեր տրամադրութեան տակ չունինք բաւարար տուեալներ անոնց գոյութեան, թիւի ու գործունէութեան վերաբերեալ: Չուաքեանի փոխանցած տուեալներուն համաձայն Կաթողիկէները 1974թ.-ին կը հիմնեն մանկամասեր-մանկապարտէզ մը⁴⁸:

1935-ին Հալէպ կը հասնին Միւխթարեան հայրերը, օրուան առաջնորդ Գրիգոր արք. Հինտիէի խնդրանքով՝ հայախօս սերունդին դաստիարակութիւնը ստանձնելու համար: Նախ յանձն կ'առնեն թեմի դպրոցի տնօրէնութիւնը, յետագային իրենք եւս կ'ունենան նորակառոյց վարժարան մը Հալէպի Պաղտատ կայարանի եւ Էշրէֆիէ թաղամասին մէջ:

1939-ին տեղի կ'ունենայ Սանճաքի հայոց գաղթը: Թրքական բանակի Ալեքսանտրէթ մուտքով, Հայ կաթողիկէները իրենց վարդապետներով կը գաղթեն Հալէպ: Կը փակուին Հայ կաթողիկէներու դպրոց-

ները Գըրըզ խանի եւ Պէյլանի մէջ: Կը գաղթեն Ալեքսանտրէթէն, Պիթիասէն եւ Անտիոքի շրջակայքէն իրենց հետ փոխադրելով եկեղեցւոյ տոմարները, որոնք կը պահպանուին Բերիոյ Հայ կաթողիկէ առաջնորդարանի արխիւներուն մէջ:

Գաղթականներու մեկ մասը կը հաստատուի Հալէպ՝ Սիւլէյմանիէ, Հէօլիւք եւ Ճեպէլ Սէյտէ (Շէյխ Մաքսուտ) արուարձաններուն մէջ: Ասոնց համար Գրիգոր արք. Հինտիէ մեծ աշխատանք կը տանի. նախ կը սեփականացնէ Սիւլէյմանիէի Ս. Փրկիչ եկեղեցին, որ Յիսուսեան հայերու սեփականութիւնն էր եւ անոր կից դպրոց մը կը կառուցէ: Գաղթականներու մեծ բազմութիւնը կը ստիպէ առաջնորդին Հէօլիւքէն ընդարձակ հողատարածք մը գնել եւ կառուցել Ս. Յովսէփ եկեղեցին, կողքը՝ քահանայից տուն եւ Յովսէփեան վարժարանը 1939 թ.-ին: 1943 թ.-ին Ճեպէլ Սէյտէի մէջ կը կառուցէ մատուռ եւ դպրոց⁴⁹:

ՈՒՍՈՒՄՆԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Սփիւռքի նոր ձեւաւորուած համայնքներու կողքին, հին հայկական գաղթավայրերը եւս, ինչպիսին Հալէպը, համալրուած էր նոր գաղթականներով: Հայաշատ բնակավայրերու նորաստեղծ եւ գործող համայնական կառոյցները՝ եկեղեցի, դպրոց, մշակութային օճախներ ի դին կատարուած զոհողութիւններու ալիւս ի վիճակի չէին բաւարարելու անհամար գաղթականներու կարիքները: Հալէպի մէջ գործող գաղթականաց վարժարաններն անգամ այլեւս ի գօրոճ չէին նորագաղթող երեխաներու ուսումնական գործընթացը կազմակերպելու: Ուստի 1920-1930-ական թթ. ազգին ներկայացուցիչները հնարաւոր միջոցներ կը ձեռնարկեն մատաղ սերունդի լեզուի պահպա-

դպրոցը, իսկ ասորի կաթողիկէները՝ մանչերու դպրոցը: (Տե՛ս Չուաքեան Յակոբ, մշ. աշխ., էջ 262-263):

47 Նոյն տեղում, էջ 265:

48 Նոյն տեղում, էջ 232:

49 Միոյնաթեան Տէր Պետրոս Արք., մշ. աշխ., «Գեղարդ» Սուրիաճալ տարեգիրք, Ե. գիրք, Հալէպ, էջ 412:

նութեան⁵⁰ եւ կրթադաստիարակչական հիմնախնդիրները լուծելու:

1920-ական թուականներուն Հալէպի մէջ արդէն կը գործէին յարանուանական (աւետարանական եւ կաթողիկէ), տարրական եւ երկրորդական վարժարաններ, իսկ նորակազմ համայնքի հայկական (առաքելական) կրթարանները մանկապարտէզներ, նախակրթարաններ⁵¹ եւ որբանոցներ էին:

Համայնքէն ներս Հալէպի Ազգային Առաջնորդարանի հովանաւորութիւնը վայելող երկրորդական վարժարան գոյութիւն չունէր: Բերիոյ Թեմի [Բերիա, Հալէպի պատմական անունն է, որով թեմը կոչուած է] Ազգային իշխանութեան երկրորդական վարժարան ունենալու փորձերը ձախողած էին: Իսկ հայ կաթողիկէ եկեղեցին, որ Մուղղուսի գինադադարէն ետք ստուար թիւ կը կազմէր եւ օժտուած էր կրօնական եւ կրթական հաստատութիւններով ու համայնքէն ներս աշխոյժ գործունէութիւն կը ծաւալէր, 1920-ական թուականներու երկրորդ կիսուն արդէն կորսնցուցած էր կենսունակութիւնը: Բժշ. Թօփճեան Յ. կը գրէ. «Կարելի չէ Սուրիոյ հայ կաթողիկէներուն ստոյգ թիւը որոշել: Հայ Կաթողիկէ հոգեւորականները ենթադրաբար թիւը կը բարձրացնէին մինչեւ 25.000-ի, իսկ հայ առաքելական կրօնաւորները զայն կ'իջեցնէին մինչեւ 10,000-ի: Զգամարտութիւնը հաւանաբար երկու թիւերուն միջինն է»⁵²:

Կաթողիկէ վարժարաններէն ներս հայ աշակերտներուն հայերէնի դասաժամեր կը յատկացուէին երբ անոնց թուաքանակը որոշ թիւի մը յանգէր եւ յաւելեալ վճարում-

ներ կատարուէին: Հետեւաբար խաթարուած էր մայրենիի ուսուցումն ու տոհմային ոգին⁵³: Բժշ. Յ. Թօփճեան կը գրէ, որ հայ կաթողիկէ դպրոցի դասաւանդման լեզուն ֆրանսերէն էր: Թէեւ կը դասաւանդուէին հայերէն եւ հայոց պատմութիւն, սակայն կը շեշտէ յօդուածագիրը. «Դպրոցը հայացնելու համար մասնաւոր խնամք թափելու ենք»⁵⁴:

Աւելին, հայ կաթողիկէ դպրոցները ապահովուած էին դպրոցական յարմարաւէտ շէնքերով եւ մանկավարժական որակաւոր անձերով⁵⁵: Կաթողիկէները դրամական օգնութիւն կը ստանային Վատիկանէն, Ֆրանսական կառավարութեան կողմէ եւ զանազան կազմակերպութիւններէ⁵⁶:

1924-1925թթ. հայ կաթողիկէ համայնքը Հալէպի մէջ ունէր 4 դպրոցներ.

1- «Հայ կաթողիկէ մանչերու բարձրագոյն վարժարան (College Armeno-Catholic Sacre-coeur). ունէր 500 ուսանող, 30 ուսուցիչ:

2- Հայ կաթողիկէ Մանչերու ս. Գրիգոր Լուսաւորիչ վարժարան (ձրիավարժ նախակրթարան) ունէր 300 ուսանող եւ 10 ուսուցիչ:

3- Հայ կաթողիկէ Աղջկանց վարժարան (Քերց Անարատ Յղութեան), որ ունի 200 աշակերտուհի, 15 ուսուցչուհի:

4- Հայ կաթողիկէ Աղջկանց Սրբուհի Աննայի Վարժարան (ձրիավարժ նախակրթարան Քերց Անարատ Յղութեան), որ ունէր 200 աշակերտուհի, 8 ուսուցչուհի»⁵⁷:

Այս չորս վարժարաններուն մէջ կային 1400 ուսանող ուսանողուհիներ, 63 կրթա-

50 Այդ թուականներուն թրքախօսութիւնը համատարած երեւոյթ էր Հալէպի Ռիդաասնաբնակ գաղթականներու մօտ:

51 Եղիայեան Բ., *Սերունդի մը դաստիարակչութիւնը*, Ամթիլիաս, 1962, էջ 13:

52 Տրթ. Թօփճեան Յ., *Հայութիւնը Սուրիոյ մէջ*, Բ., «Հայաստանի Կոչնակ», ԻԸ. տարի, Յուլիս 14, 1928, թիւ 28, Նիւ Եորք, էջ 874 ա:

53 «Եփրատ» երկօրեայ թերթ, Բ. տարի, թիւ 137, 7 Նոյեմբեր 1928, Հալէպ, էջ 3:

54 Տրթ. Թօփճեան Յ., *Հայութիւնը Սուրիոյ մէջ*, Բ., «Հայաստանի Կոչնակ», ԻԸ. տարի, Յուլիս 14, 1928, թիւ 28, Նիւ Եորք, էջ 874 ա.

55 Թոփուգեան Յ., *Աշխ.*, էջ 275:

56 Թոփուգեան Յ., *Աշխ.*, էջ 276:

57 «Արեւ» օրաթերթ, ԺԱ. տարի, թիւ 1980, - 28 Օգոստոս 1925, Գաֆիրէ:

կան պաշտօնեայ: Վարժարաններու նիւթական վիճակը կ'ապահովուէր՝ սան-սանուհիներու տարեկան վճարէն, Ֆրանսական կառավարութեան նպաստէն, իսկ մնացեալը կը հայթաղութիւնէր տեղական հայ կաթողիկէ հասոյթներէն⁵⁸:

Գահիրէի «Արեւ» թերթը կը գրէ, որ հայ կաթողիկէներու կրթական հաստատութիւնները լաւ կազմակերպուած էին եւ Հալէպ քաղաքի բարձրագոյն ամենասիրուած դպրոցներէն էին: Հոն ստուար թիւ կը կազմէին հայ գաղթականներու զաւակները, որոնք ուսման համար աննշան վճարում կը կատարէին եւ երբեմն ալ՝ բոլորովին ճրի⁵⁹:

Հալէպի Ազգային նախակրթարաններէ շրջանաւարտ աշակերտին հետ չէր իր ուսումը կատարելագործել տեղի ֆրանսական հաստատութեան մէջ կամ մեկնիլ Կիւրոսի Մելգոնեան, Պէյրութի Հայ ճեմարան եւ կամ Երուսաղէմի ընծայարան, ի տարբերութիւն Հալէպի Ամերիկեան գոլէճի (Ալեքսիոս գոլէճի) հայ աշակերտին, որ իր ուսումնական ընթացքը աւարտելէ եւ գոլէճի վերջին երկու կարգերը՝ «Ֆրեյմէն եւ սոփոմոր», Հալէպ կամ Պէյրութ շարունակելէ ետք, դիւրաւ ուսումնառութիւնը կրնար շարունակել Պէյրութի Ամերիկեան համալսարանը⁶⁰:

Ուստի, Ազգային երկրորդական վարժարանի մը ծնունդը եւ ֆրանսական պաշալորիայի աւարտական քննութիւններուն Հայերէն լեզուի ներգրաւուիլը դասացանկին՝ անհրաժեշտ պահանջը դարձած էր⁶¹: Տարուած աշխատանքը անարդիւնք չի մնար եւ «Ա. Զօպանեանի, Զատիկ Խանգատեանի եւ տնօրէն Էմիլ Մաթիէոյին կողմէ՝ Ֆրանսայի կրթական նախարարութեան մօտ, մասնաւոր հրամանագրով հայերէն լեզուն» կ'ընդունուի

«որպէս երկրորդ լեզու ֆրանսական պաշալորիային քննութեանց»⁶²:

ՀԱԼԷՊԻ ՄԻՍԻԹԱՐԵԱՆ ՎԱՐՓԱՐԱՆԻ ԾՆՈՒՆԴԸ

Հալէպի ֆրանսական Լիսէի աւարտականի կարգ-մը ուսանողներ եւ շրջանաւարտ երիտասարդներ կ'այցելեն Հալէպի մէջ ֆրանսական կրթական հաստատութիւնները, հետազօտական աշխատանք կը կատարեն եւ արդիւնքները կը հրապարակեն օրուան հայ մամուլին մէջ: 1934-1935 թուականներուն կ'որոշեն ճիգ չխնայել իրականացնելու համար վերոնշեալ երկու կենսական, բայց դժուարին հիմնախնդիրները:

Անոնք (երիտասարդները) յաճախակի հանդիպումներ կ'ունենան համայնքի երեւելիներու՝ Բերիոյ թեմի Առաջնորդ Արտաւազդ արք. Սիւրմէեանի, բանասէր բժշկ. Յարութիւն Տէր Ղազարեանի, բժշկ.ներ Ահարոն Խաչատուրեանի, Յովհաննէս Հրեշտակեանի եւ Կիրակնօրեայ վարժարաններու վարիչ-տնօրէն Լեւոն Զէնեանի հետ, որոնք իրենց կարգին հնարաւոր քայլեր կը ձեռնարկեն: Նամակներ կը յղեն հայ պատասխանատու շրջանակներու՝ ՀՐԸ Միութեան քարտուղար Վահան Մալեգեանին, Արշակ Զօպանեանին, հանրածանօթ քարտիզագէտ Զատիկ Խանգատեանին, Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Բաբգէն Ա. Կաթողիկոսին: Համայնքի ազգայինները տոհմային դատարակութիւնը կենսական խնդիր համարելով եւ հայ մանուկը այլասերումէ փրկելու առաջադրանքէն թելադրուած խորհրդակցաբար պաշտօնագիրով կը դիմեն երկարամեայ կրթամշակութային բեղուն գործունէութիւն եւ երեք դարեայ պատմու-

58 Թոփուզյան Հ., նշ. աշխ., էջ 275:

59 «Արեւ» օրաթերթ, ԺԱ. տարի, թիւ 1980, 28 Օգոստոս 1925, Գափիլէ:

60 Նազարեան Էլի, Հալէպահայ կրթարաններ, Միսիթարեան վարժարան, «Զարթօնք» օրաթերթ,

թիւ 121 (14.294), Ուրբաթ, 22 Փետր. 1985,

Պէյրութ, էջ 3:

61 Անդ:

62 Անդ:

թիւն ունեցող Վենետիկի Միխիթարեան Միաբանութեան նորընտիր ԱբբաՏօր՝ Սրապիոն վրդ. Ուլուհոճեանին, խնդրելով որ Միաբանութեան հայրերը Հալէպի հայաշատ համայնքին մէջ երկրորդական վարժարանի մը հիմնումին ձեռնարկեն: Կոչին ընդառաջելով, Աբբահայրը Հալէպ կ'ուղարկէ Հ. Վրթանէս Խանպէկեանը⁶³:

Բերիոյ թեմի Առաջնորդ Տ. Արտաւազդ արք., որ մօտէն տեղեակ էր երիտասարդներու գործունէութեան, իր «Պատմութիւն Հալէպի Հայոց» աշխատութեան մէջ կը նշէ, որ «Լուսաւորչական հայերն էին որ փափաքեցան Հալէպի կաթողիկէ հայոց ազգային ու մտաւոր զարգացումին համար Միխիթարեանց վարժարան մը հաստատել տալ»⁶⁴:

1936թ.-ին Հալէպի մէջ կը սկսի Միխիթարեան Միաբանութեան հայրերու կրթական գործունէութիւնը, որ մինչ օրս կը շարունակուի:

Եզրակացութիւն.

Եղեռնի հետեւանքով դէպի Սուրիա գաղթող հայ տարագիր կաթողիկէները իրենց առաջ ծանրացած բազմապիսի դժուարութիւններու կողքին գլխաւոր համարե-

ցան ուսուցման ուղին: Անոնք բացի մանկապարտէզէն, տարրական դպրոցներէն Սուրիոյ տարբեր շրջաններու մէջ ունեցան իրենց կրօնակրթական կառոյցները, ուր ուսուցչական պաշտօններ վարած էին մեծ մասամբ որակեալ մանկավարժներ: Սուրիան գտնուելով Ֆրանսական մանդատի ներքոյ, դպրոցներէն ներս պարտադրուած էր ֆրանսերէնը արաբերէնի եւ հայերէնի կողքին: Սակայն հայ կաթողիկէ համայնքները կազմուած էին հայախօս եւ մեծ մասամբ արաբախօս (քրտախօս) ընտանիքներէ, ուստի հայ կաթողիկէ վարժարաններու համար առաջնային էր.

ա. Վարժարաններէն ներս դասապահեր յատկացնել հայերէնի ուսուցման եւ վերջ տալ արաբախօսութեան: Այս գծով տարուած աշխատանքը միշտ չէ որ դրական արդիւնք արձանագրած է:

բ. Սերթիֆիքայի պրովէի եւ պաքալորիայի պետական քննութեանց համար դպրոցներէն ներս կիրառել ե՛ւ ֆրանսական ե՛ւ արաբական պետական (տեղական) ծրագիրները, ինչ որ առաւելութիւն կ'ապահովէր շրջանաւարտներուն համալսարանական ուսում եւ պաշտօններ ձեռք բերելու համար:

63 Տէր Ղազարեան Հ. Եփրեմ, *Յուշամատեն 50ամեակի (1936-1986) Հալէպի Միխիթարեան վարժարանի*, Վեներիկ, 1990, էջ 18: Տե՛ս *Յուշամատեն 50ամեակի, 1936-1986/ Հալէպի Միխիթարեան վարժարանի*, «Բազմավէպ» հանդէս, թիւ 3-4, 1990, Վեներիկ, էջ 487:

64 Սիրմէեան Արտաւազդ Արքեպիս., *Պատմութիւն Հալէպի հայոց*, Երրորդ հատոր, Փարիզ, 1950, 536: